մեծագինք մարդկանց և ձիանց, ասեն իբրու 50 միլիոնի չափ։ Այժմ քննութիւն առնեն սառաֆաց, թէ որք ընդ նոսա ունէին առևտուր, և զայն ևս ժողովեսցեն, և առ յայլ արհեստաւորս այսպէս, ևս առաւել առ ճէւահրճիս և ղոյումճիս. ամենայն հայք յահ և դող են, և գլխակոր վասն այսմ իրի և եաղուպին։ Սա ունի և զայլ իմն եղբայր չարագոյն, յակոբ անուն, սոցունց անուամբ բարձրացեալ մի ամ ոչ գոյ, եկեալ բնակիլ ի ղալաթիա, ի ղուլէղաբուն զմի սառաֆի տուն գնեաց. յետ այնորիկ ի ձեռն թախանձանաց և ուժոյ դրամոց աւելի տալով էառ զ[հ]այոց տունսն և միաւորեաց ընդ իւրոյ. և այսպէս դիտէր և զայլոցն առնուլ. բազում ձիանս զարդարունս պահէր, զբազում սպասաւորս ունէր իբրև չուխատար. յորժամ ձիով ընդ այլոց հանգանակողաց իւրոց ի յզբօսանս գնայր, առաջի և զկնի, հետի ոտս ընթանային... զերկոսեանն ևս վերուցին այսինքն զեաղուպն և զայս չարաճճիկ յակոբս. զեաղուպն սպաննեցին չարաչար. այս տակաւին ի բանտի է։ Ոչ է յայտ թէ զերծանի։ Ասեն թէ եաղուպն որ յերուսաղեմայ եբեր զյակոբ փաթրիքն, և ինքն երից աւուրց մէջն նստոյց փաթրիք, հետևաբար զհալածանս յարուցանելոց էին միջնորդութեամբ ղզլար աղային և սուլէյմանին. ի թագաւորէն զհատիհումմայի հանել, և յամենայն տեղեաց զուղղափառութիւն բառնալ։...

Գերյարգութեան ձերում

Ղուաստ ծառայ
Հայր Միքայէլ Վ.

Ցամի տեառն 1752-ին
յօգոստոսի 3-ին
[Կ. Պոլիս]

Ջերևելի զգեստսն զգլխարկսն մեծածախսն [եաղուպին] եասախ արարին, ուժգին վրէժխնդիր են... յուլիս 29, միոյ ժամու գիշերոյն խիստ երկրաշարժութիւն եղև. տևեաց ժամանակ, երկու հայր մերի չափ. սարսափումն տուաւ ամենայնից։

ՃԿԲ.

Հետագայ պաշտօնագրով կ՚իմանանք, թէ Մխիթար իր կենդանութեան կը վարէր Վենետկոյ Հասարակապետութեան կողմանէ Ռէվիզօրի (= Գրաքննիչ) պաշտօնը։

Հիմնադրիս մահէն յետոյ նոյն Պետութիւնը ներկայ հրովարտակով կը յանձնէ այդ պատուաբեր պաշտօնը անոր Ցաջորդին՝ Մելգոնեան Աբրահոր, իշխանութեամբ վարելու ոչ միայն ի Վենետիկ՝ այլ և «ի տէրութեանս Վենէժականի»։ Սոյն թղթով՝ ի հարկին՝ անոր փոխանորդ կը ճանչնայ իրը գրաքննիչ զՀ. Մկրտիչ Անանեանը։

Որոշ չէ՝ թէ բնագրին այս հայերէն թարգմանութիւնը որո՞ւ գործ է. մեզ կը թուի որ անիկա եղած ըլլայ Հ. Անտոն Պաղտասարեանէ, որ արդէն ասկէ քիչ առաջ ալ կատարած էր ուրիշ վաւերաթուղթի մը թարգմանութիւնը։

Բանասէրք պիտի իմանան ինքնին, թէ որքան մեծ ու շահագրգռական է թուղթիս պարունակութիւնը, որ միանգամայն կը ցոլացնէ Վենետկոյ Հասարակապետութեան որդեգրած կրօնական ըմբռնողութեան և ոգւոյն աստիճանը։

Ցամի տեառն ՌՃԾԲԻՆ. ի ԻԴ Օգոստ.

Գերապայծառ և ևս Գերազանցագոյն Տեարքն Ռէֆուամաթօրք դպրութեանն Պատվայու, զկնի մահուանն Հ. Մխիթարայ Աբբային Միանձանց Հայոց ի կղզւոջն Սրբոյն Ղազարու եղելոց, որ և վարէր զՊաշտօնն Ռէվիզօրի գրեանցն Հայկականաց, նկատելով